

— Դու քիչ մը շունչ առ, որ պատմես,— պատասխանեց Երիզացին առանց իւր հանդարտութիւնը կորսնցնելու, եւ դառնալով Ռշտունուոյն՝ կը տեսնէ՞ս եղբայր թէ գործելու համար ի՞նչ վայրկենի կը սպասէի:

Երիտասարդը, որուն երեսը կարմրած՝ քրտինքը ճակտէն եւ մազերէն կը կաթին եւ մեծ-մեծ շունչեր կ'առնէր եւ կուրծքը կ'ելներ կ'իջներ հեւալով, երբ քիչ մը հանդարտեցաւ սկսաւ պատմել.

— Երկու օր է, որ ես ձեր հրամանաւ ծպտեալ ժողովրդեան հետ էի, որ մայր եկեղեցին լցուած պատրիարքը կը խնդրէր աղաղակաւ. իսկ նա, որ երեսը կը ծածկէր՝ վերջապէս այս առաւօտ իջաւ եւ նստաւ հայրապետական աթոռը, ժողովրդեան խելօքներն սկսան գանգոյի Վաղենտինի դէմ, նորա զինուորաց անկարգութեանց դէմ, յարկաց ծանրութեան, հացի թանկութեան դէմ եւ կը պահանջէին, որ երթայ ինք անձամբ խօսի Վաղենտինի հետ: Նա երկու մետրապոլիտ եւ ժողովրդեան առաջնորդներէն ոմանք պատգամաւոր ուղարկեց զօրավարին: Ժողովուրդը պատասխանի կը սպասէր եւ ահա Անտօնիոս տեղակալը հազար սպառնալէն մարզիկներով խուժեց եկեղեցին եւ ժողովրդեան գլխաւորներն հրամայեց գանակոծել: Հայրապետը այն ատեն կանգնած խստութեամբ յանդիմանեց Անտօնիոս եւ ըսաւ. «Աստուծոյ տաճարին մէջ՝ աստուծոյ ժողովրդեան հետ բարբարոսք եւ անօրէնք միայն այդպէս կը վարուին, զօրավար. եւ դու կը համարձակիս եւ աստուծոյ չէ՞ս վախեր»: Իսկ Անտօնիոս յարձակեցաւ ելաւ բեմին վրայ եւ պատկառելի ծերուն՝ «Չա՛ր ծեր, դո՛ւ ես, որ կը յանդգնիս այս անարգ խաժամուժը գրգռել իւր տեսարց դէմ եւ զիս յանդիմանել»,— ըսաւ, եւ ապտակ մը զարկաւ աստուծոյ մարդուն. աղաղակաց որոտմանց ձայն մը բարձրացաւ ամբոխէն, եւ անգէն ժողովուրդը կատաղի գազան դարձաւ, դաշոյններ յայտնեցան եւ փայլեցան, աթոռ, աշտանակ, ջահ, քշոց, հայրապետական գաւազանք զէնք եղան, տաճարը խառնակութեան եւ պատերազմի դաշտ դարձաւ, արիւնը սկսաւ վազել, ժողովրդեան ինկածներուն տեղ նոր մարդիկ յաջորդեցին, մինչեւ Անտօնիոսի հազարքն անհետացան, եւ ինք ողջ-ողջ հանեցին դուրս տաճարէն եւ կապած փայտակոյտի մը վրայ բարձրացնելով այրեցին. կատաղի տղայք եւ կանայք պար կը բռնէին խարոյկին շուրջը, երբ ես թողի, եկայ լուր տալու: